



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՅ 30-ԱՄԵԱԿ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցին 18 Նոյեմբերին կը տօնէ իր հիմնադրութեան 30րդ տարեդարձը: Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. արտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանէ եւ սարկաւագական ձեռնադրութիւն պիտի կատարէ եկեղեցւոյ մէջ: Ս. Խորանին պիտի սպասարկեն Ազգ. Առաջնորդարանի քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի զոյգ վարիչները՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանն ու Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Արարողութիւններէն ետք, եկեղեցւոյ հիմնադրութեան 30-ամեակին Նուիրուած ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ: Ձեռնարկը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ կազմակերպուած է եկեղեցւոյ հոգեւոր հովիւին եւ հոգաբարձութեան կողմէ: Տեղի պիտի ունենայ մոմավառութիւն եւ գեղարուեստական յայտագիր, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Հոլիվուտի Ռոգ եւ Ալէք Փիլիպոս Ազգ. վարժարանի աշակերտները:

DIVINE LITURGY AND ORDINATION OF DEACONS ON THE 30TH ANNIVERSARY OF ST. GARABED CHURCH

Sunday, November 18, 2007, is the eve of the Fast of Advent. On this day, St. Garabed Church in Hollywood will celebrate its 30th anniversary with Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The Prelate will also deliver the sermon and conduct the ordination of deacons. Christian Education Department Directors Very Rev. Fr. Muron Aznikian and Very Rev. Fr. Barthev Gulumian will assist at the altar.

A banquet organized by the Pastor and Board of Trustees in celebration of the 30th anniversary of the church will take place at "Karapetian" Hall immediately following services. The program includes a candle-lighting ceremony and an artistic portion with the participation of Rose and Alex Pilibos School students.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ**

Կիրակի, 18 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 7:00-ին, Լոս Անճելըսի «Օմնի» պանդոկին մէջ տեղի պիտի ունենայ Հայաստան Համահայկական Հիմնադրամի տարեկան ճաշկերոյթը: Պատուոյ հիւրերը պիտի ըլլան Արցախի նախագահ Բազօ Սահակեան եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան: Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի ընդառաջէ իրեն տրուած հրաւերին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները:

Համաձայն տարիներու աւանդութեան, Հայաստան Համահայկական Հիմնադրամի թելեթոնը տեղի պիտի ունենայ Գոհաբանութեան տօնին օրը, Հինգշաբթի, 22 Նոյեմբերին: Առաջնորդ Սրբազանը մասնակցութիւն պիտի բերէ թելեթոնի յայտագիրին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւններն ու քաջալերանքը:

PRELATE TO ATTEND ARMENIA FUND GALA

On the evening of Sunday, November 18th, the annual gala of Armenia Fund will take place at the Omni Hotel in Los Angeles. The guests of honor at this year's gala are His Excellency Bako Sahakyan, President of Nagorno-Karabakh, and His Excellency Vartan Oskanian, Foreign Affairs Minister of Armenia. The Prelate will attend the gala and deliver the invocation.

The 10th international Armenia Fund Telethon will take place on Thanksgiving Day, Thursday, November 22nd, during which the Prelate will deliver his message and convey his blessings.

**ՀԱՄԱՉՈՒՅԻՆԻ «FORGOTTEN BREAD» ԳԻՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ
ՁԵՌՆԱՐԿԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ**

Կիրակի, 18 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 6:30-ին, Հոլիվուտի «Տաղլեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Համազգայինի Հայ Կրթական եւ Մշակութային միութեան առաջին հայ-ամերիկեան գրողներու ճաշկերոյթը եւ Դաւիթ Խերտեանի Նոր հրատարակուած «Forgotten Bread» գիրքի ներկայացումը, որ նուիրուած է ամերիկահայ առաջին սերունդի գրողներուն: Ձեռնարկին հասոյթը պիտի յատկացուի հայ ուսանողներու, որոնք կը մասնագիտանան լրագրութեան եւ յարակից մարզերու մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոլիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Բինյ. Վասիլեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը:

PRELATE REPRESENTED AT HAMAZKAYIN BOOK PRESENTATION AND SIGNING

On the evening of Sunday, November 18th, the first annual dinner and book signing of Armenian-American writers organized by Hamazkayin will take place at Taglyan Hall in Hollywood. The book "Forgotten Bread" by David Kherdian will be presented which is dedicated to the first generation of Armenian-American writers. All proceeds from the event will go to scholarship funds for Armenian students studying journalism.

Archpriest Fr. Vicken Vassilian, Pastor of St. Garabed Church, will represent the Prelate and convey his message.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԻՈՐԷ ՀԱՅ ԼԵՉՈՒՆՆԵՐԻ ՆՈՒԻՐՈՒԹՅՈՒՆ Կ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՓԱՌԱՏՕՆԸ

Կիրակի, 18 Նոյեմբերին, առաւօտեան ժամը 10-Էն սկսեալ, Վահան եւ Անուշ Շամլեան Ազգ. վարժարանի շրջափակին մէջ տեղի պիտի ունենայ մշակութային փառատօն մը, նուիրուած Հայ Լեզուի Տարուան: Յիշատակելի այս օրը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը եւ կազմակերպուած է վարժարանի տնօրէնութեան, անձնակազմին եւ ծնողա-օժանդակ մարմինին կողմէ: Գեղարուեստական տարբեր ելոյթներով մասնակցութիւն պիտի բերեն վարժարանի աշակերտները: Անոնք ելոյթ պիտի ունենան երգերով, պարերով եւ թատերական ներկայացումներով: Նախատեսուած է նաեւ գիրքերու ցուցահանդես: Միօրեայ փառատօնը պիտի տեւէ միջեւ երեկոյեան ժամը 6:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան ներկայ պիտի ըլլայ փառատօնին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան խօսքը:

V. & A. CHAMLIAN SCHOOL FESTIVAL IN CELEBRATION OF THE ARMENIAN LANGUAGE

On Sunday, November 18th, Vahan and Anoush Chamlian School will celebrate the Year of the Armenian Language with a festival starting at 10:00 a.m. and scheduled to end at 6:00 p.m. The festival is being held under the auspices of the Prelate and has been organized by the administration and parent-teacher organization.

The festival will feature various artistic performances by students as well as a book exhibit. Very Rev. Fr. Barthev Gulumian will attend and convey the Prelate's blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԺՈՂՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Երեքշաբթի, Նոյեմբեր 13-ին, Առաջնորդ Սրբազան Հոր Նախագահութեամբ, Ազգային Վարչութիւնը հանդիպում ունեցաւ Սոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներուն, հոգաբարձութեան եւ երեսփոխանական կազմին հետ: Հանդիպումի ընթացքին քննարկուեցան եկեղեցւոյ եւ «Բաղրամեան» սրահի բարեգարդման ծրագիրները:

Յայտնենք որ Կիրակի, 18 Նոյեմբերին, երեկոյեան ժամը 6:00-ին, ի նպաստ Ս. Խաչ Մայր Տաճարի եւ «Բաղրամեան» սրահի բարեգարդման, ճաշկերոյթ մը տեղի պիտի ունենայ Սոնթեպելլոյի «Բաղրամեան» սրահին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հոր, Գերպ. Տ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Հոր պատգամը:

PRELATE AND EXECUTIVE COUNCIL MEET WITH HOLY CROSS CATHEDRAL PASTORS AND BOARD OF TRUSTEES

On the evening of Tuesday, November 13th, the Prelate and Executive Council met with the Pastors, Board of Trustees, and Delegates of Holy Cross Cathedral during which the impending renovation project of “Bagramian” Hall was discussed.

On the evening of Sunday, November 18th, a fundraiser will take place at “Bagramian” Hall to benefit the renovation of the hall. Very Rev. Fr. Muron Aznikian will attend and convey the Prelate’s message and blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻ ՆԵՐՎԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՏԻՈՔԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Անտիոքի Ուղղափառ եկեղեցւոյ Միացեալ Նահանգներու Արեւմտեան շրջանի Առաջնորդարանը յատուկը ընդունելութիւն մը կազմակերպած է Կիրակի, 18 Նոյեմբերի երեկոյեան, Լոս Անճելըսի Ս. Նիքոլա տաճարին մէջ, ի պատիւ Պրըքլիի Աթենակորաս Պատրիարքի անուան հիմնարկի ղեկավար Նիքիթաս Արքեպիսկոպոսին: Այս առիթով հրաւեր ուղղուած է նաեւ Թեմիս Առաջնորդ Սրբազանին:

Առաջնորդ Սրբազան Հոր տնօրինումով, Կրօնական Ժողովի ատենապետ Գերպ. Միւռն Ճ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ընդունելութեան ու պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին սրտի խօսքը:

PRELATE REPRESENTED AT RECEPTION OF THE ANTIOCHIAN ORTHODOX DIOCESE

The Antiochian Orthodox Diocese of Los Angeles and the West, under the leadership of The Right Reverend Bishop Joseph, has organized a dinner scheduled to take place on the evening of Sunday, November 18, at St. Nicholas Antiochian Cathedral in Los Angeles. The guest of honor is H.E. Metropolitan Nikitas of the Patriarch Athenagoras Orthodox Institute in Berkeley.

The evening will begin with Vespers and conclude with dinner and the official program. Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate at the Vespers.

2007-08 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՄԱՐ, ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԸ \$ 535,000 ՏՈՒՆԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ

Սրտի անհուն գոհունակությամբ եւ երախտագիտական զգացումներով այսու կը հաղորդենք մեր ժողովուրդին, որ Թեմիս Ազգային վարժարաններուն զօրավիգ կանգնելու տարիներու իր բարի աւանդութեան համաձայն, ԼԻՆՍԻ Հիմնարկը ուսումնական 2007-2008 տարեշրջանին համար կատարեց իշխանական նուիրատուութիւն մը, որուն ընդհանուր գումարն է 535,000.00 տոլար:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական ժողովը, Ազգային Վարչութիւնը, Ազգային Վարժարաններու Խնամակալ Մարմինն ու յարակից միաւորները խորին շնորհակալութիւն կը յայտնեն ԼԻՆՍԻ Հիմնարկին ու անոր ճամբով՝ Հայ ժողովուրդին ու հայրենիքին ծառայող պատասխանատուներուն:

ԼԻՆՍԻ Հիմնարկին հետեւողական օժանդակութիւնները կենսական դեր ունին մեր գաղութի կրթական եւ ազգային հաստատութեանց կարիքներուն հոգացման մէջ: Այս աջակցութեան ճամբով, մեր վարժարանները կարելիութիւնը կ'ունենան աւելի հեզասահ կերպով կենսագործելու նոր սերունդներու հայակերտումի ու հոգեմտաւոր կարիքներուն գոհացումը:

Թող բարձրեալն Աստուած բազմապատիկ վարձահատոյց ըլլայ ԼԻՆՍԻ Հիմնարկի բարերարին ու պատասխանատուներուն, օրհնէ անոնց վաստակը եւ իր հովանին տարածէ անոնց բարեսիրական ու մարդասիրական աշխատանքներուն վրայ:

THE LINCY FOUNDATION ALLOCATES \$ 535,000 TO PRELACY SCHOOLS

With heartfelt gratitude we are pleased to announce that The Lincy Foundation has once again made a generous donation in the amount of \$535,000.00 to Prelacy Armenian schools for the 2007-2008 academic year.

On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, the Prelacy Religious and Executive Councils, the Board of Regents of Prelacy Schools, and committees serving under their auspices, convey their sincerest thanks to The Lincy Foundation and to its administrators for their dedicated services to our people.

The Lincy Foundation has, for many years, been providing for the needs of our educational and cultural organizations. Through their generous grants, our schools have been able to carry out their mission of providing the highest standard of education to subsequent generations.

May Almighty God reward the founder and administration of The Lincy Foundation and bless their charitable and humanitarian endeavors.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆՆ ՈՒ ԱՉԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԱՉԳ. ԱՐԻ ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Չորեքշաբթի, Նոյեմբեր 14-ին, Առաջնորդ Սրբազանը այցելութիւն մը տուաւ Օրէնճ Քաունթիի Ազգային Արի Կիրակոս Մինասեան Վարժարանը եւ դիմաւորուեցաւ Տնօրէնին, ուսուցիչներուն, աշակերտներուն ու վարժարանի մարմիններու ներկայացուցիչներուն կողմէ: Վերամուտի այցելութեանց ծիրին մէջ տեղի ունեցող այս այցելութեան ընթացքին, Առաջնորդ Սրբազանին կ'ընկերանային եկեղեցւոյ հոգեւոր հովիւը՝ Արժ. Տ. Զրանդ Զինյ. երեցեան եւ Ազգային Վարչութեան ատենապետը՝ Տոքթ. Կարօ Յակոբեան:



Առաջնորդ Սրբազանն ու ընկերակիցները այցելեցին բոլոր դասարանները եւ հետեւեցան աշակերտներուն ուսումնառութեան աշխատանքներուն: Աշակերտները ներկայացուցին արտասանութիւններ:

Աւելի ուշ, Առաջնորդ Սրբազանը եւ ներկայացուցիչները հանդիպում ունեցան տնօրէնութեան հետ, խորհրդակցելով վարժարանին իրագործումներուն ու դիմագրաւած

հարցերուն մասին: Զանդիպում մը տեղի ունեցաւ նաեւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ Զոգեւոր Զովիւին, Զոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան վարչութեան հետ, քննարկելու համար անոնց աշխատանքներն ու ծրագիրները: Վերջապէս, հանդիպում մը տեղի ունեցաւ նաեւ Օրէնճ

Քաունթի գաղութի մարմիններու ներկայացուցիչներուն հետ, քննարկելու համար շրջանը յուզող հարցեր ու ծրագիրներ:

PRELATE VISITS A.G. MINASSIAN SCHOOL AND ORANGE COUNTY COMMUNITY MEMBERS

On Wednesday, November 14th, the Prelate visited Ari Guiragos Minassian School in Orange County where he was greeted by the principal, administration, students, and representatives of various school bodies. Parish Pastor Rev. Hrant Yeretsian and Executive Council Chairman Dr. Garo Agopian accompanied the Prelate.



After the classroom visits, the Prelate and delegation met with the principal to discuss the endeavors of the school and any challenges they may face. A meeting also took place between the Forty Martyrs Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary to analyze their activities. A final meeting took place with representatives of local organizations to discuss matters of concern to the community.

Ս. ՊԱՏԱՐԱԳ՝ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Շաբաթ, 10 Նոյեմբերի երեկոյեան ժամը 6:30ին, Առաջնորդ Սրբազան Զօր Նախագահութեամբ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշիւն Մատրան մէջ: Պատարագեց Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան: Մինչ մատրան մէջ սուրբ պատարագ կը մատուցուէր, «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ հաւատացեալներ եւ եկեղեցիներու երիտասարդաց միութիւններու անդամ-անդամուհիներ, պաստառի վրայ խումներամ եւ հետաքրքրութեամբ կը հետեւէին արարողութեան:

Պատարագի տեւողութեան, կիրարկուեցաւ դաստիարակչական ծրագիր մը. Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան բացատրութիւններ տուաւ հայ եկեղեցւոյ պատարագի արարողութեան զանազան բաժիններուն, ինչպէս նաեւ պատարագիչի զգեստաւորումին, գործածուած սպասներուն եւ Պատարագի խորհուրդին մասին:



Յայտնենք, որ այս դրութիւնը պիտի օգտագործուի նաեւ յառաջիկայ ամսուան Շաբաթ, 1 Դեկտեմբերին, երբ ամսական դրութեամբ Ս.

Պատարագ մատուցուի մատրան մէջ, որպէսզի մեր եկեղեցւոյ հաւատացեալները, մասնաւորաբար երիտասարդներ, մասնակից եւ հաղորդակից դառնան սուրբ պատարագի արարողութեան եւ իմաստին: Արդարեւ, Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս Առաջին Լուսաւորիչ Առաքեալներու տօնին առթիւ, Շաբաթ, Դեկտեմբեր 1-ին, երեկոյեան ժամը 6:30-ին, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր, Ս. եւ Անմահ Պատարագ տեղի պիտի ունենայ Ազգային Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշիսէն Մատրան մէջ: Պիտի պատարագէ եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիմեան:

DIVINE LITURGY CELEBRATED AT THE PRELACY CHAPEL

On the evening of Saturday, November 10th, the Prelate presided over Divine Liturgy at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel, which was celebrated by Very Rev. Fr. Muron Aznikian. At the same time, parishioners and Armenian Church Youth Association members followed the service intently from a screen in the adjacent “Dikran and Zarouhie Der Ghazarian” hall.



In the hall, Very Rev. Fr. Barthev Gulumian gave explanations as to the various parts of the Liturgy, the vestment worn by the celebrant, the vessels used, and the meaning of the Liturgy.

This same format will be utilized at the next service which will take place on Saturday, December 1st, at 6:30 p.m., on the feast of the Apostles Sts. Thaddeus and Bartholomew. Very Rev. Fr. Barthev

Gulumian will celebrate Divine Liturgy and deliver the sermon.